ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԱՆ-ԳՀԾ-2026-1

ք. Երևան «19» հունվարի 2026թ.

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս **գլխավոր քարտուղար Համլետ Հարությունյանի**, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ն,** այսուհետ՝ «Կատարող», ի դեմս **տնօրեն Դավիթ Ղույյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1910-Ն որոշման 9-րդ կետը և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի **2026 թվականի հունվարի 16-ի N 18-Ա հրամանը՝** կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատուցել փորձաքննությունների կատարման ծառայություններ՝ դատական փորձաքննությունների կատարման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով և սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1.1 և N 1.2 Հավելվածների («Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» և «Փորձաքննության ծառայությունների ենթատեսակները և դրանց միավորների նախահաշվային արժեքները») պահանջներին համապատասխան, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել փորձագետի կողմից՝ սույն պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարված եզրակացությունն ու վճարել փորձաքննության կատարման ծառայությունների գինը:

1.2. Յուրաքանչյուր կոնկրետ փորձաքննության կատարումը հանձնարարում և փորձաքննության կատարման արդյունքում կազմված եզրակացությունն ընդունում է տվյալ փորձաքննության անցկացումը նախաձեռնողը՝ դատարանները (քրեական գործերով), քրեական հետապնդում կամ վարչական վարույթ իրականացնող մարմինները, որոնք ի պաշտոնե հանդիսանում են Պատվիրատուի ներկայացուցիչը:

1.3. Յուրաքանչյուր կոնկրետ փորձաքննության բովանդակությունը որոշվում է փորձաքննությունը նախաձեռնողի՝ տվյալ փորձաքննությունը նշանակելու մասին որոշմամբ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1.1 և N 1.2 հավելվածներում նշված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) չընդունել Ծառայությունը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1.1 և N 1.2 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 քննարկել և ընդունել N 1.1 և N 1.2 հավելվածներում նշված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 N 1.1 և N 1.2 հավելվածներում նշված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 N1.1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը ընդունվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 սույն պայմանագրի N 1.1 և N 1.2 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4. Պատվիրատուի հանձնարարությամբ կատարել լրացուցիչ փորձաքննություն՝ բացթողումը լրացնելու նպատակով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ (Հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի N 1.1 և N 1.2 հավելվածներում նշված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **606.230.100 (Վեց հարյուր վեց միլիոն երկու հարյուր երեսուն հազար հարյուր) ՀՀ դրամ:**

4.2 Ծառայությունների մատուցման գինը ներառում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը, տուրքերը և այլ վճարներ, ինչպես նաև Կատարողի կողմից սույն պայմանագրով իրականացվող փորձաքննությունների համար իրականացված ծախսերը: Փորձաքննությունների, ըստ տեսակների, կատարման ծառայությունների գինը որոշվում է ըստ սույն պայմանագրի հավելված N 1.2-ի միավոր գների:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

Ծառայությունը մատուցվում է 0 (զրո) տոկոս շահույթով:

4.3 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի

պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2025թ.:

4.4 Եթե Պատվիրատուի հանձնարարությամբ կատարվում է լրացուցիչ փորձաքննություն՝ Կատարողի կողմից բացթողումը լրացնելու նպատակով, ապա մատուցված ծառայության համար վճարում չի նախատեսվում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1.1 և N 1.2 հավելվածներում նշված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացրած աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացրած աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 **Սույն պայմանագիրն ունի հետադարձ ուժ, տարածվում է 2026 թվականի հունվարի 05-ից սկսած Պատվիրատուի և Կատարողի միջև սույն պայմանագրով ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի՝ սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:**

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է 11 (տասնմեկ) էջից՝ ներառյալ Հավելվածները, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1.1 N1.2, N 2 և N 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ **ՀՀ արդարադատության նախարարություն** **ք. Երևան, Վ. Սարգսյան 3/8** **ՀՀ ֆինանսների նախարարության** **կենտրոնական գանձապետարանի** **գործառնական վարչություն** **Հ/Հ 900011194181** **ՀՎՀՀ 02506264** _____ (ստորագրություն) Կ.Տ.	**ԿԱՏԱՐՈՂ** **«Հայաստանի Հանրապետության** **փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ** **ք. Երևան, Արշակունյաց 23,** **ՀՀ ֆինանսների նախարարության** **կենտրոնական գանձապետարանի** **գործառնական վարչություն, թիվ 1 ՏԳԲ** **Հ/Հ 900018003146** **ՀՎՀՀ 02512069** _____ (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 3
« » հունվարի 2026թ. կնքված
N ***ՀՀԱՆ-ԳՀԾ-2026-1*** *պայմանագրի*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արդարադատության նախարարություն

Ք. Երևան, Վ. Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն
Հ/Հ900011194181
ՀՎՀՀ 02506264

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄ
«Հայաստանի Հանրապետության
փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ
Ք. Երևան, Արշակունյաց 23,
ՀՀ ֆինանսների նախարարության
կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն, թիվ 1 ՏԳԲ
Հ/Հ 900018003146
ՀՎՀՀ 02512069

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2026 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **Փորձաքննությունների կատարման ծառայությունների մատուցում**
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» «_ » 2026 թ.
Պայմանագրի համարը՝
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ՝ «____» «_____» 2026թ. Դուրս գրված N հաշիվ-ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները.

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկականբնութագրիհամառոտշարադրանքը	քանակականցուցանիշը		կատարմանժամկետը		Վճարմանենթակագումարը /հազարդրամ/	Վճարմանժամկետը /ըստվճարմանժամանակացույցի/
			ըստպայմանագրովիաստատվածգնմանժամանակացույցի	փաստացի	ըստպայմանագրովիաստատվածգնմանժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
_____
ստորագրություն
_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված № 1.1.
19.01.2026թ. կնքված
№ ՀՀԱՆ-ԳՀԾ-2026-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
(ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՏԵՍԱԿԻ ՔԱՆԱԿՆ ՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԳԻՆԸ)

Գնման առարկայի անվանումը	Փորձաքննության տեսակը	Քանակը (հատ)	Նախահաշվային արժեքը (ՀՀ դրամ)
Փորձաքննությունների կատարման ծառայություններ	Ձեռագրաբանական	402	23,526,000
	Փաստաթղթաբանական	367	26,455,000
	Հետքաբանական	759	37,586,000
	Ֆոտոտեխնիկական և դիմանկարային	62	3,628,000
	Զգաբանական	767	37,954,000
	Պայթյունատեխնիկական	143	14,181,000
	Նյութագիտական	528	38,020,000
	Հողագիտական և կենսաբանական	2417	87,006,000
	Մենդամթերքի և խմիչքների	1487	80,313,000
	Տեսաձայնագրային	190	13,682,000
	Հրդեհատեխնիկական	28	2,194,000
	Էլեկտրատեխնիկական	3	296,500
	Շինարարատեխնիկական	441	34,391,000
	Ավտոտեխնիկական	1477	83,054,600
	Ֆինանսատնտեսագիտական և դատահաշվապահական	361	45,467,000
	Ապրանքագիտական	364	24,249,000
	Համակարգչատեխնիկական	161	14,651,000
	Մշակութային արժեքների	42	3,031,000
	Հոգեբանական	92	12,750,000
	Դատահոգեբուժական	83	12,730,000
	Լինգվիստիկական	29	2,591,000
	Մտավոր սեփականության օբյեկտների	19	4,834,000
	Ճարտարագիտատեխնիկական	26	2,588,000
	Հեղինակային	10	942,000
	Պայթյունատեխնոլոգիական	1	110,000
	Ընդամենը	**10,259**	**606,230,100**

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	**Ավարտը**
2026 թվականի հունվարի 05-ը	2026 թվականի դեկտեմբերի 20-ը ներառյալ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արդարադատության նախարարություն
ք. Երևան, Կ. Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
ԿԳ գործառնական վարչություն
Հ/Հ 900011194181
ՀՎՀՀ 02506264

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Հայաստանի Հանրապետության
փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Վարդանանց 23
ՀՀ ֆինանսների նախարարության
ԿԳ գործառնական վարչություն, թիվ 1ՏԳՀ
Հ/Հ 900018003146
ՀՎՀՀ 02512069

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված № 1.2
19.01.2026թ. կնքված
№ ՀՀԱՆ-ԳՀԾ-2026-1 պայմանագրի

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐՆ ԸՍՏ ԵՆԹԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Փորձաքննության տեսակը	Փորձագիտական աշխատանքի նորմատիվային ժամածախսը, (ժամ) *	Փորձագիտական աշխատանքի մեկ ժամվա արժեքը, (ՀՀդրամ)*	Փորձաքննության մեկ առանձին օբյեկտի նախահաշվային արժեքը (ՀՀ դրամ)
Ձեռագրաբանական, այդ թվում			
Ձեռագրի փորձաքննություն	14	4500	63000
Ստորագրության փորձաքննություն	12	4500	54000
Փաստաթղթաբանական, այդ թվում՝			
Փաստաթղթի և/կամ դրա պատրաստման եղանակի փորձաքննություն	16	4500	72000
Փաստաթղթի ռեկվիզիտների փորձաքննություն	16	4500	72000
Դրամանիշերի և/կամ արժեթղթերի փորձաքննություն	8	4500	36000
Փաստաթղթի ռեկվիզիտների նյութի նույնականացման և/կամ ռեկվիզիտների կատարման վաղեմության փորձաքննություն	28	4500	126000
Փաստաթղթաբանական տեսակի այլ օբյեկտների փորձաքննություն	12	4500	54000
Հետքաբանական, այդ թվում՝			
Մարդու կամ կենդանիների կողմից թողնված հետքերի փորձաքննություն	8	4500	36000
Առարկաների, գործիքների, մեխանիզմների և դրանց կողմից թողնված հետքերի փորձաքննություն	10	4500	45000
Տրանսպորտային միջոցների, դետալների և դրանց կողմից թողնված հետքերի փորձաքննություն	16	4500	72000
Սառը և նետողական զենքի փորձաքննություն	10	4500	45000
Ֆոտոտեխնիկական և դիմանկարային, այդ թվում՝			
Լուսանկարի ֆոտոտեխնիկական փորձաքննություն	12	4500	54000
Լուսանկարի փորձաքննություն անձի դիմանկարային նույնականացման նպատակով	14	4500	63000
Ձգաբանական, այդ թվում՝			
Հրազենի և դրա փամփուշտների փորձաքննություն	12	4500	54000
Հրազենային վնասվածքների և հետքերի, կրակոցի հանգամանքների փորձաքննություն	12	4500	54000
Կրակոցի հետքերի և արգասիքների քիմիական փորձաքննություն	12	4500	54000
Հրազենի հատուկ դրոշմվածքի պարզման փորձաքննություն	8	4500	36000
Պայթյունատեխնիկական, այդ թվում՝			
Պայթուցիկ նյութերի, դրանց պայթյունի արգասիքների և հետքերի փորձաքննություն	22	4500	99000
Ռազմամթերքների, պայթուցիկ սարքավորումների և դրանց պայթյունի հետքերի փորձաքննություն	22	4500	99000

Վառոդների, հրագործական բաղադրությունների և դրանց այրման հետքերի փորձաքննություն	22	4500	99000
Նյութագիտական, այդ թվում՝			
Մանրաթելերի և գործվածքների փորձաքննություն	8	4500	36000
Լաքուներկերի և ներկածածկույթների փորձաքննություն	16	4500	72000
Նավթամթերքների և վառելիքաքսուկային նյութերի փորձաքննություն	16	4500	72000
Մետաղների և համաձուլվածքների փորձաքննություն	8	4500	36000
Հեղուկ կամ պինդ նյութերի փորձաքննություն ատոմային աբսորբցիոն սպեկտրոմետրիայի մեթոդի կիրառմամբ	28	4500	126000
Թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, միներալների, հանքային ապարների փորձաքննություն	16	4500	72000
Ապակու, սիլիկատային, կերամիկական կամ նմանատիպ այլ ծագման նյութերի փորձաքննություն	16	4500	72000
Ռետինե, պլաստմասսե կամ այլ պոլիմերային նյութերի փորձաքննություն	16	4500	72000
Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պրեկուրսորների, դեղամիջոցների, խիստ ներգործող և թունավոր նյութերի փորձաքննություն	16	4500	72000
Անհայտ ծագման նյութերի փորձաքննություն	20	4500	90000
Հողագիտական և կենսաբանական, այդ թվում՝			
Հողային ծագման օբյեկտների փորձաքննություն	8	4500	36000
Բուսական ծագման օբյեկտների փորձաքննություն առանց դենդրոխրոնոլոգիական մեթոդի կիրառման	8	4500	36000
Բուսական ծագման օբյեկտների փորձաքննություն դենդրոխրոնոլոգիական մեթոդի կիրառմամբ	8	4500	36000
Կենդանական ծագման օբյեկտների փորձաքննություն	8	4500	36000
Սննդամթերքի և խմիչքների, այդ թվում՝			
Ալկոհոլային, թույլ ալկոհոլային, ոչ ալկոհոլային խմիչքների և դրանց հումքի որակական ցուցանիշների փորձաքննություն	12	4500	54000
Տեսաձայնագրային, այդ թվում՝			
Ձայնի և հնչող խոսքի փորձաքննություն վերծանման նպատակով	16	4500	72000
Ձայնագրությունների ձայնային միջավայրի, պայմանների, միջոցների, նյութերի և հետքերի փորձաքննություն	16	4500	72000
Ձայնի և հնչող խոսքի փորձաքննություն անձի նույնականացման նպատակով	16	4500	72000
Տեսապատկերի, տեսագրությունների պայմանների, միջոցների, նյութերի և հետքերի փորձաքննություն	16	4500	72000
Հրդեհատեխնիկական, այդ թվում՝			
Հրդեհից վնասված շենքերի և շինությունների, այլ առարկաների կամ կառուցվածքների փորձաքննություն	18	4500	81000
Հրդեհից վնասված հողատարածքների փորձաքննություն	18	4500	81000

Հրդեհից վնասված շարժական գույքի փորձաքննություն	18	4500	81000
Նյութերի և սարք-սարքավորումների, այդ թվում տեխնոլոգիական գործընթացների հրդեհավտանգ հատկությունների և սարքավորումների աշխատանքի հրդեհավտանգ ռեժիմների փորձաքննություն	16	4500	72000
Տեխնոլոգիական գործընթացների, տեխնոլոգիական սարք-սարքավորումների, շենքերի, շինությունների հրդեհային անվտանգության նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխանության, դրանց հրդեհավտանգավորության և հակահրդեհային սարքավորումներով ապահովվածության փորձաքննություն	18	4500	81000
Էլեկտրատեխնիկական, այդ թվում՝			
Ռադիոէլեկտրոնային, էլեկտրատեխնիկական, էլեկտրամեխանիկական կենցաղային նշանակության սարքավորումների փորձաքննություն	22	4500	99000
Շինարարատեխնիկական, այդ թվում՝			
Շենքերի, շինությունների, ճարտարագիտական գծային կառուցվածքների ճանապարհաշինարարական և այլ կառուցապատման օբյեկտների փորձաքննություն	18	4500	81000
Շենքերի, շինությունների, ճարտարագիտական գծային կառուցվածքների ճանապարհաշինարարական և այլ կառուցապատման օբյեկտների քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն	20	4500	90000
Հողաշինարարական փորձաքննություն	14	4500	63000
Ավտոտեխնիկական, այդ թվում՝			
Ճանապարհատրանսպորտային պատահարի փորձաքննություն	8	4500	36000
Տրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակի փորձաքննություն	16	4500	72000
ճանապարհատրանսպորտային պատահարի առաջացման հանգամանքների պարզման տրանսպորտային հետքաբանական փորձաքննություն	16	4500	72000
Ճանապարհի տեխնիկական վիճակի, ճանապարհատրանսպորտային պատահարի վայրում ճանապարհային պայմանների փորձաքննություն	10	4500	45000
Ֆինանսատնտեսագիտական և դատահաշվապահական, այդ թվում՝			
Դատահաշվապահական փորձաքննություն	28	4500	126000
Ֆինանասատնտեսագիտական փորձաքննություն	28	4500	126000
Ապրանքագիտական, այդ թվում՝			
Պարենային, ոչ պարենային ապրանքների, կենսաբազմազանության օբյեկտների, ծառայությունների, դրանց փաստաթղթերի, այդ թվում արժեքային ցուցանիշների փորձաքննություն	8	4500	36000

Տրանսպորտային միջոցների, գյուղատնտեսական տեխնիկայի, այդ թվում դրանց արժեքային ցուցանիշների փորձաքննություն	10	4500	45000
Բարդ կառուցվածքային առանձնահատկություններ ունեցող արտադրական կամ այլ ապրանքային համալիրների, այդ թվում դրանց արժեքային ցուցանիշների փորձաքննություն	32	4500	144000
Անշարժ գույքի, այդ թվում դրա արժեքային ցուցանիշների փորձաքննություն	12	4500	54000
Շինարարական նյութերի և աշխատանքների, այդ թվում դրանց արժեքային ցուցանիշների փորձաքննություն	12	4500	54000
Համակարգչատեխնիկական, այդ թվում՝			
Ցանցային փորձաքննություն	14	4500	63000
Ծրագրային ապահովումների փորձաքննություն	28	4500	126000
Համակարգիչների կոշտ սկավառակներում պարունակվող, նաև ջնջված տեղեկատվության փորձաքննություն	32	4500	144000
Թվային տեսագրիչների կոշտ սկավառակներում պարունակվող, նաև ջնջված տեղեկատվության փորձաքննություն	20	4500	90000
Բջջային հեռախոսների կամ պլանշետային համակարգիչների ներքին հիշողության կրիչներում պարունակվող, նաև ջնջված տեղեկատվության փորձաքննություն	24	4500	108000
Այլ թվային հիշողության կրիչներում պարունակվող, նաև ջնջված տեղեկատվության փորձաքննություն	12	4500	54000
Համակարգչային սարքավորումների, դրանց աշխատունակության և/կամ կիրառման նշանակության փորձաքննություն	12	4500	54000
Մշակութային արժեքների, այդ թվում՝			
Կերպարվեստի բնագավառի փորձաքննություն	16	4500	72000
Հոգեբանական, այդ թվում՝			
Անձի հոգեբանական փորձաքննություն	34	4500	153000
Հետմահու հոգեբանական փորձաքննություն	34	4500	153000
Հոգեբանական այլ տեսակի փորձաքննություն	24	4500	108000
Դատահոգեբուժական, այդ թվում՝			
Դատահոգեբուժական	34	4500	153000
Լինգվիստիկական, այդ թվում՝			
Գրավոր խոսքի փորձաքննություն	20	4500	90000
Բանավոր խոսքի փորձաքննություն	20	4500	90000
Մտավոր սեփականության օբյեկտների, այդ թվում՝			
Առևտրային նշանների շփոթության աստիճանի նմանության պարզման փորձաքննություն	56	4500	252000
Ճարտարագիտատեխնիկական, այդ թվում՝			
Անվտանգության տեխնիկայի և աշխատանքի պաշտպանության կանոնների խախտման պատճառների և հետևանքների պարզման փորձաքննություն	22	4500	99000
Հեղինակային, այդ թվում՝			
Գրավոր խոսքի հեղինակի պարզման փորձաքննություն	22	4500	99000
Պայթյունատեխնոլոգիական, այդ թվում՝			
Պայթյունից վնասված օբյեկտների փորձաքննություն	24	4500	108000

Նյութերի և տեխնոլոգիական սարքավորումների, այդ թվում՝ տեխնոլոգիական գործընթացների պայթյունավտանգ հատկությունների և սարքավորումների աշխատանքի պայթյունավտանգ ռեժիմների փորձաքննություն	24	4500	108000

*Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 11-ի N 1864-Լ «Յուրաքանչյուր մեկ առանձին օբյեկտի փորձաքննության միջին նորմատիվային ժամանակը, փորձաքննության մեկ առանձին օբյեկտի գնահատման չափանիշները և դրա փորձաքննության արժեքն ըստ դատական փորձաքննությունների տեսակների և ենթատեսակների սահմանելու մասին» որոշման

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արդարադատության նախարարություն

ք. Երևան, Վ. Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
ԿԳ գործառնական վարչություն
Հ/Հ 900011194181
ՀԿՀՀ 02506264

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Հայաստանի Հանրապետության
փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Արշակունյաց 23
ՀՀ ֆինանսների նախարարության
ԿԳ գործառնական վարչություն, թիվ 1ՏԳԲ
Հ/Հ 900018003146
ՀԿՀՀ 02512069

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված № 2

«19» հունվարի 2026թ. կնքված
№ ՀՀԱՆ-ԳՀԾ-2026-1 պայմանագրի

№ ՀՀԱՆ-ԳՀԾ-2026-1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2026թ. պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ որում*												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1.	Փորձաքննությունների ծառայություններ	151550000	151550000	151550000	303115000	303115000	303115000	454665000	454665000	454665000	606230100	606230100	606230100	606230100 (Վեց հարյուր վեց միլիոն երկու հարյուր երեսուն հազար հարյուր) ՀՀ դրամ

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արդարադատության նախարարություն

ք. Երևան, Վ. Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011194181
ՀՎՀՀ 02506264

_____
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Հայաստանի Հանրապետության
փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Արշակունյաց 23
ՀՀ ֆինանսների նախարարության
կենտրոնական գանձապետարանի
գործառնական վարչություն, թիվ 1 ՏԳԲ
Հ/Հ 900018003146
ՀՎՀՀ 02512069

_____
(ստորագրություն)
Կ.Տ.